ԱՐՏԱԲՈՒՅՆՔ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Սետրակյան
Հեռախոս՝ +374 94.895807

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում է Արտաբույնք գյուղին: Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում՝ Եղեգնաձոր-Վարդենյաց լեռնանցք մայրուղու հյուսիս-արևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 17 կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 6 կմ:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Հորբատեղի գյուղական համայնքին, հարավից՝ Շատինի գյուղական համայնքին, արևելքից՝ Եղեգիսի գյուղական համայնքին և արևմուտքից՝ Սալլիի գյուղական համայնքին:

Գյուղի անվան հետ առնչվող գրառումները հայ պատմագրության մեջ հիշատակվում է 5-րդ դարից: Եղեգիս գյուղի 1500-ից ավելի տարիների գոյության փաստը անժխտելի է: 1828թ. Խոյ գավառից թվով 38 ընտանիք վերահաստատվում է գյուղում: Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետի Էլեգիս վտակը:

Գյուղի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սմբատաբերդ ամրոցը, որը կառուցվել է 12-րդ դարում և եղել է Օրբելյանների ոստանը: Բերդը կոչվել է Սյունյաց տան իշխան Սմբատի անունով: Սմբատաբերդից հյուսիս-արևմուտք գտնվում է Ցախացքար եկեղեցու համալիրը, կառուցված Աբբաս Բագրատունու օրոք 10-րդ դարում:

Արտաբույնքում է գտնվում «Ցախաց քար» վանական համալիրը (XI դար), Սմբատաբերդ ամրոցը (X դար), Սբ. Աստվածածին եկեղեցին (1321 թ.), «Չոի ժամտունը» (XIII դար), XIII դարի ամրոցը, մ.թ.ա. 2-րդ-ից 1-ին հազարամյակի կիկլոպյան ամրոցը և X-XVI դարերի խաչքարեր:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1700մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Արոտավայրերը զբաղեցնում են 1136.8 հա տարածք, վարելահողերը՝ 6.9 հա, խոտհարքերը՝ 197 հա:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Արտաբույնք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 89 հուշարձան: